ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԵՑ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի գլխավորությամբ և մասնակցությամբ թեմի քահանաներ Տ. Գևորգ քհն. Վարդանյանի և Տ. Հակոբ քհն. Սարոյանի դեկտեմբերի 21-ին Ռուսաստանի խոշորագույն քաղաքներից Նիժնի Նովգորոդում կատարվեց «Սուրբ Ամենափրկիչ» եկեղեցու հիմնարկեքը:

Արարողության ընթացքում, ըստ Հայ Եկեղեցու ավանդության, 16 հիմնաքարերը լվացվեցին ջրով, գինով և սրբագործվեցին Սրբալույս Մյուռոնով:

Հաջորդ օրը Նիժնի Նովգորոդի մարզային հայ համայնքի նախաձեռնությամբ և Պետական Համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ու ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի մասնակցությամբ կայացավ միջազգային գիտական կոնֆերանս «Հայաստանի Հանրապետությունը և Սփյուռքի արտաքին քաղաքականության խնդիրներ և հեռանկարներ» ծրագրով: Կոնֆերանսին զեկույցներով ելույթներ ունեցան Տ. Գևորգ քհն. Վարդանյանը, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան ակադեմիկոս Օ. Ա. Կոլոբովը, Հայաստանի հետ հարաբերությունների և համագործության Ռուսաստանի ընկերության նախագահ Վ.Վ. Կրիվոպուսկովը, տարածքագիտության ամբիոնի վարիչ Ա. Ա. Կոռնիլովը և ուրիշներ: Ծրագրին առնչվող թեմաներով զեկույցներ կարդացին նաև ՆՆՊՀ-ի շուրջ մեկ տասնյակ ուսանողներ և ասպիրանտներ:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ